ազգատոհմէ, մի քահանայ Սաղիանի, և երկուքն ի բանիմաց և յազգասէր պարոնայց Զամախուոյ, կամ Բազուայ, որք ի բացակայութեան՝ կարեն փոխանորդօք օժանդակել գործոյն, իսկ Հինգերորդն՝ որ և նախագահ, լիցի միշտ վանահայրն Ս. Ստեփաննոսի վանից որ ի Սաղիան։

,, Է- Վանական ուսումնարանն Ս. Ստեփաննոսի վանից Սաղիանի կառավարեսցի հետեւեալ արդեամբք։

,, Ա. Ցոկոսեօք տասն հազար ռուբլի դրամագլխոյ. «Բուդաղեան եղբարց»։

,, Բ. Տարեկան մի հարիւր ռուբլի մշտական օժանդակութիւն ի կողմանէ վանից Ս. Ստեփաննոսի որ ի Սաղիան։

,, Գ. Թոշակագրամ երթեւեկ աշակերտաց՝ ըստ որոշման վարչութեան ուսումնարանին։

,, Ը. Վանահայրն զոլով նախագահ վարչութեան ուսումնարանին իբրեւ մերձաւոր հսկող և պատասխանատու, պարտաւոր է միշտ աշխատիլ արթնութեամբ հսկել ի վերայ բարեկարգութեան ուսումնարանին և յատկապէս կարգապահութեան ուսուցչաց և դասաւանդութեան նոցա՝ համաձայն հաստատեալ ի Վեհափառ Հայրապետէ ծրագրին ուսմանց, նոյնպէս և ի վերայ բարոյական կրթութեան և կենցաղավարութեան աշակերտաց և պարապմանց նոցին, եւս և կարեւոր պիտոյից և պարագայից ուսումնարանին։

,, Թ. Վարչութիւնն վանական ուսումնարանին ընտրեսցէ յանդամոց իւրոց զդանձապետ, որում և յանձնեսցին ուսումնարանական դրամքն՝ ի մուծանել ի մատեանն և ըստ կարգաւորութեան վարչութեանն՝ մատակարարել զայն։

Բ. ՑԱՂԱԴՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

,, Ժ. Քանզի բուն նպատակ վանական ուսումնարանիս է պատրաստել զարժանաւոր պաշտօնեայս եկեղեցւոյ, այր վասն և մեծամասնութիւն աշակերտաց պարտի լինել յորդւոց քահանայից և քահանայացու զաւակաց։

,, ԺԱ. Թիւ գիշերօթիկ և երթեւեկ աշակերտաց որոշի ի